ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
«ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Ք. Գորիս, Գ.Տաթևացի 31, էլ. Փոստ՝ info@gorismc.am
☏ (0284) 2-21-52

«16» օգոստոս 2024թ.

ՀՐԱՄԱՆ 344

<ԱԳԱՍՏ> ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <ա> պարբերության և 2-րդ մասի պահանջները, ինչպես նաև այն, որ <Ագաստ> ՍՊԸ-ն խախտել է <Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի և <Ագաստ> ՍՊԸ-ի միջև 30.01.2024թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5> ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած դեղորայքի՝ չափաբաժիններ 6,60,63 (ամբրոքսոլ 30մգ դեղահատ, էթանոլ 96% լուծույթ և օքսիտոցին 1մլ) մատակարարման պարտավորությունը, որը հանգեցրել է պայմանագրի միակողմանի լուծմանը.

ՈՐՈՇԵՑԻ՝

<Գորիսի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի հետ 30.01.2024 թվականին կնքված <ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5> ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) կողմ <Ագաստ> ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 00435781, գործունեության հասցեն՝ ք.Երևան, Տ.Պետրոսյան 31/1) Պայմանագրով ստանձնած պարտավորությունները 6,60,63-րդ չափաբաժինների մասով խախտելու և վերջինս միակողմանի լուծելու հիմքով՝ գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, վերջինիս ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ Դ.ՄԱՇՈՒՐՅԱՆ